«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/125

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2025 թ. N 125

«ՊՐՈՎԻԶՈՐ, ՆԿԱՐԻՉ ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՍՊԸ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Պրովիզոր, նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ**

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 30

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի ապրիլի 18-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Պրովիզոր, նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 19 փետրվարի 2024թ.

ինքնավերլուծության ներկայացում՝ 30 մայիսի 2024թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 16-18-ը սեպտեմբերի 2024թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 27 դեկտեմբերի 2024 թ.

թերությունների վերացման նախնական

ծրագրի ներկայացում՝ 14 հունվարի 2025թ.

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Ասյա Սիմոնյան**՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Գոհար Սարգսյան**՝ Երևանի հենակետային բժշկական քոլեջի կրթության որակի ապահովման պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ:
- **Շուշանիկ Ասրյան**՝ Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի և կից բազային քոլեջի որակի ապահովման պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ:
- **Անգելինա Տոնոյան**՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի անդամ՝ ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. *ՄՈՒՀ-ը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:*

Քոլեջում կրթական ծրագրերի իրականացումը կազմակերպվում է բավարար արդյունավետությամբ՝ ապահովելով ուսանողների պահանջվող մասնագիտական կարողությունների ձևավորումը: Կարիք կա նաև ներդնելու այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտան մշտադիտարկել ակնկալվող բոլոր վերջնարդյունքների ձեռքբերումը և նպաստել կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել առաջադրանքների շտեմարաններ, որոնք ուղղված կլինեն ուսանողների գործնական, վերլուծական և հետազոտական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Անհրաժեշտ է ապահովել ուսանողների հետադարձ կապի հնարավորությունը՝ նպաստելով նրանց ակտիվ ներգրավվածությանը մասնագիտական կարողությունների զարգացման գործընթացում և աջակցելով անհատական առաջընթացի գնահատմանը: Ուշադրություն պետք է դարձնել նաև դասախոսական կազմի կարողությունների շարունակական զարգացմանը:

Ուսումնական հաստատությունում բոլոր դասավանդող և աջակցող աշխատակիցների համար անհրաժեշտ է ներդնել պլանավորված և պարբերական վերապատրաստման միջոցառումներ՝ նպատակաուղղված արդի ուսուցման մեթոդների կիրառմանը և մասնագիտական առաջընթացի խթանմանը:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է բարելավել դասախոսական կազմի ընտրության և ներգրավման գործընթացները՝ ապահովելու համապատասխան մասնագետների ներգրավվածությունը դասավանդման գործընթացում, այդ թվում՝ նեղ մասնագիտացումների ուղղությամբ: Դրան զուգահեռ, անհրաժեշտ է վերանայել ուսումնական միջավայրի որակը՝ արդիականացնելով և ընդլայնելով ենթակառուցվածքները և ռեսուրսները՝ դրանք լիարժեք և հավասարաչափ հասանելի դարձնելով բոլոր ուսանողների համար:

2. ***Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Քոլեջում ռազմավարական պլանավորումը կառուցված է հիմնականում ընթացիկ խնդիրների իրականացման շուրջ, մինչդեռ անհրաժեշտ է հստակեցնել երկարաժամկետ զարգացման տեսլականը՝ ռազմավարական կառավարման համակարգի ամբողջականությունն ապահովելու համար: Խորհուրդ է տրվում վերանայել ռազմավարական ուղղությունների առաջընթացի գնահատման առկա ցուցանիշները և մշտադիտարկումը դարձնել տարեկան՝ այն փոխկապակցելով որոշումների կայացման գործընթացին: Որակի ապահովման համակարգը ներկայումս ձևավորման փուլում է: Որակի մշակույթի ձևավորման և տարածման համար անհրաժեշտ է ապահովել շարունակական և ինստիտուցիոնալ աջակցություն՝ համակարգի կայուն ինտեգրումն ապահովելու նպատակով կառավարման բոլոր մակարդակներում:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Քոլեջը քայլեր է ձեռնարկում հետազոտական գործունեության խթանման և միջազգայնացման ամրապնդման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է վերաիմաստավորել հետազոտական գործունեության դերը՝ հստակ սահմանելով ամբիոնների մասնակցությունը հետազոտության և ուսումնառության փոխկապակցման գործընթացում, ինչպես նաև ձևակերպելով մասնագիտական ուղղվածությամբ հետազոտական առաջնահերթությունները: Միջազգայնացման ոլորտում անհրաժեշտ է վերանայել պատասխանատու ստորաբաժանման գործառույթներն ու իրավական-կազմակերպչական հիմքը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը քոլեջի ինստիտուցիոնալ ռազմավարությանը: Ուսանողների և դասախոսների՝ օտար լեզվի իմացության մակարդակի բարելավումը և շարժունության մասնակցության ընդլայնումը պետք է դառնան շուտափույթ լուծման ենթակա խնդիրներ՝ միջազգային համագործակցության իրական հիմքեր ստեղծելու համար:

4. Թերությունների վերացման ծրագրում անհրաժեշտ է նախատեսել վերը նշված բացերի լուծմանն ուղղված առաջնահերթ գործողություններ՝ ապահովելով նաև հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան միջոցառումներ:

Ելնելով վերը նշվածից՝ Հավատարմագրման հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Պրովիզոր, նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 /չորս/ տարի ժամկետով:**

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՄՈՒՀ-ի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց:
3. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման հանձնաժողովի նախագահ Վ. Գաբրիելյան
2025 թ., ապրիլի 18